ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՎՁՄԵՀԱԵՁԲ-16/03-1-3

Մարզային /տեղական/ նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների գնման

ք. Եղեգնաձոր «31» հունվարի 2018թ.

«ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Կ Սահակյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Եղեգնաձորի ՃՇԾ» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա.Նիկողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից՝ հիմք ընդունելով 2016թ. հունվարի 15-ին կնքված ՎՁՄԵՀԱԵՁԲ-16/03-1 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

7. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել սույն Համաձայնագրի N 1 հավելվածով նախատեսված ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն սույն Համաձայնագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2018 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:

Դեկտեմբերի 20-ից հետո կատարված աշխատանքների համար վճարումները կիրականացվեն նշված աշխատանքները իրականացնելու համար հաջորդող տարվա հատկացված միջոցների հաշվին:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Կապալառուի կողմից կատարման ենթակա Աշխատանքների ընդհանուր գինը կազմում է 50129000 ՀՀ դրամ / հիսուն միլիոն հարյուր քսանինը հազար ՀՀ դրամ/, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը, պարտադիր այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի N 3 հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1, 2 և 3 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀՎայոցձորիմարզպետարան Շահումյան 5 ք.Եղեգնաձոր, ՀՀՖինանսներինախարարության գործառնական վարչություն ՝՝ 90035100 34026 ՀՎՀՀ 08907717 Կ.Սահակյան (ստորագրություն) Կ.Տ	''Եղեգնաձորի ՃՇԾ'' ՓԲԸ ՀՀ Վայոցձորի մարզ ք.Եղեգնաձոր.Ալավերդյան 2 ,,Հայբիզնեսբանկ,, ՓԲԸ Ք.Երևան ՀՀ 1500001737201 00 ՀՎՀՀ 08900039 Ա.Նիկողոսյան (ստորագրություն)

Հավելված 2
«31» հունվարի 2018թ. կնքված
ՎՀՄՇՀԱԾՁԲ-16/03-1-3 համաձայնագրի

Գնման ժամանակացույց
(ՀՀ Վայոց ձորի մարզպետարան)

/ՀՀ դրամ/

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման /CPV/	Ձեռք բերվող աշխատանքի անվանումը	Գնումը 2018 թ. ընթացքում				Ընդամենը
			I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
1	45231176	ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանի մարզային /տեղական/նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում	19000000	11100000	11100000	8929000	50129000

Պատվիրատու

ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք Եղեգնաձոր, Շահումյան 5
Եղեգնաձորի ՏԳԲ
ՀՀ 900351084026
ՀՎՀՀ 08907717

Կ. Սահակյան
(ստորագրություն)

Կատարող

Եղեգնաձորի <<ՃՇՇ>>ՓԲԸ ՀՀ Վայոց ձորի մարզ ք. Եղեգնաձոր, Ալավերդյան 2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ ք. Երևան
Հ/Հ 1150000173720100
ՀՎՀՀ 08900039

Գ. Ա. Նիկողոսյան
(ստորագրություն)

Հավելված 3
«31» հունվար 2018 թ. կնքված
N ՎՁՄՇՀ ԱՇՁԲ-16/03-1-3 ծածկագրով գնման համաձայնագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման /CPV/	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ըստ ամիսների՝ ընդ որում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	45231176	ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանի մարզային /տեղական/նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում		9000000	17000000	19000000	22700000	26400000	30100000	33800000	37500000	41200000	44900000	48129000	50129000

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր, Շահումյան 5
ՀՀՖինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900351084026
ՀՎՀՀ08907717

Կ.Սահակյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

"Եղեգնաձորի ՃՇՇ" ՓԲԸ ՀՀ
Վայոցձորի մարզ
ք.Եղեգնաձոր.Այավերդյան 2
„Հայբիզնեսբանկ„ ՓԲԸ Ք.Երևան
ՀՀ 1150000173720100
ՀՎՀՀ08900039

Ա.Նիկողոսյան

(ստորագրություն)

Հավելված N 1
<<31>> հունվար 2018թ. կնքված N ՎՁՄՇՀ ԱՇՁԲ-16/03-1-3
համաձայնագրի

Չափաբաժին 1

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների վիճակը, սպասարկման մակարդակները և սահմանային արժեքները 2018 թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը

Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Ավտոճանապարհի Տեխնիկական կարգը	Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/	Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը	Սպասարկման պահանջվող մակարդակ	Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդամենը /ՀՀ դրամ/
1	2	3	4	5	6	7	8
Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ							
Մ2 - Աղավնաձոր կմ0.00 – կմ6.5	Տեղական II-IV	6.5		Միջին	6.5	311502	2024763.0
Մ10 – Շատին – Գողթանիկ-Կարմրաշեն կմ0.0 – կմ18.0	Տեղական II-IV	30		Միջին	18	311502	5607036.0
Մ2 – Չիվա - Ռինդ կմ0.0 - կմ5.3	Տեղական II-IV	5.3		Միջին	5.3	311502	1650960.6
Տ-9-21 - Հորբատեղ կմ0.0 – կմ6.0	Տեղական II-IV	6.5		Միջին	6.0	311502	1869012.0
Տ-9-21 - Գետիկվանք կմ0.0 – կմ7.0	Տեղական II-IV	13.0		Միջին	7.0	311502	2180514.0
Մ10 - Հորս կմ0.0 – կմ5.3	Տեղական II-IV	5.5		Միջին	5.3	311502	1650960.6
Մ10 - Սալլի կմ0.0 – կմ1.2	Տեղական II-IV	1.5		Միջին	1.2	311502	373802.4
Մ10 - Թառաթումբ	Տեղական II-IV	1.5		Միջին	1.5	311502	467253.0

Մ10 - Թառաթումբ կմ0.0 - կմ1.5	Տեղական II-IV	1.5		Միջին	1.5	311502	467253.0
Մ2 - Մոզրով կմ0.0 – կմ11.495	Տեղական II-IV	12.7		Միջին	11.495	311502	3580831.3
S-9-24 –Մնաժայռ կմ0.0 – կմ1.8	Տեղական II-IV	1.8		Միջին	1.8	311502	560703.6
Մ2 -Ելփին կմ0.0 - կմ1.5	Տեղական II-IV	1.5		Միջին	1.5	311502	467253.0
Մ2 – Գետափ կմ0.0 – կմ2.0	Տեղական II-IV	2.5		Միջին	2.0	311502	623004.0
Մ2 – Քարագլուխ կմ0.0 – կմ1.0	Տեղական II-IV	1.0		Միջին	1.0	311502	311502.0
Մալիշկա - Կարմրաշեն կմ0.0 – կմ2.0	Տեղական II-IV	18		Միջին	2.0	311502	623004.0
Ընդամենը		**107.3**			**70.6**	311502	**21990602.5**
Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ							
Մ2 - Աղավնաձոր կմ0.00 – կմ6.5	Տեղական II-IV	6.5	SL(I)	Միջին	6.5	715877.88	4653206.2
Մ2 – Չիվա - Ռինդ կմ0.0 – կմ4.384	Տեղական II-IV	5.3	SL(I)	Միջին	4.384	715877.88	3138644.9
Մ10 - Հորս կմ0.0 – կմ5.3	Տեղական II-IV	5.5	SL(I)	Միջին	5.3	715877.88	3794152.8
Մ10 – Շատին – Գողթանիկ-Կարմրաշեն կմ0.0 – կմ2.5, կմ3.4-կմ4.32 և կմ7.5 – կմ14.5	Տեղական II-IV	30.0	SL(I)	Միջին	10.42	715877.88	7459447.5
Մ10 – Շատին- Գողթանիկ-Կարմրաշեն կմ2.5 – կմ3.4, կմ4.32-կմ7.5	Տեղական II-IV	-	SP(II)	Միջին	4.08	1404000.0	5728320.0
Մ10 - Սալի կմ0.0 – կմ1.0	Տեղական II-IV	1.5	SL(I)	Միջին	1.0	715877.88	715877.9

Մ10 - Թառաթումբ կմ0.0 - կմ1.2	Տեղական II-IV	1.5	SL(I)	Միջին	1.2	715877.88	859053.5
Մ10 - Քարագլուխ կմ0.0 – կմ1.0	Տեղական II-IV	1.0	SL(I)	Միջին	1.0	715877.88	715877.9
Մ2 -Ելփին կմ0.0 - կմ1.5	Տեղական II-IV	1.5	SL(I)	Միջին	1.5	715877.88	1073816.8
Ընդամենը		**52.8**			**35.4**		**28138397.5**
					Ընդամենը եղեգնաձորի տարածաշրջանով		**50 129 000.0**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր, Շահումյան 5
ՀՀֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900351084026
ՀՎՀՀ08907717

Հ.Սահակյան
(ստորագրություն)
L.S.

ԿԱՏԱՐՈՂ
''Եղեգնաձորի ՃՇԾ'' ՓԲԸ ՀՀ Վայոց
ձորի մարզ ք.Եղեգնաձոր.Ալավերդյան 2
,,Հայբիզնեսբանկ,, ՓԲԸ Ք.Երևան
ՀՀ 1150000173720100
ՀՎՀՀ08900039

Ս.Երիտասարդյան
(ստորագրություն)

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶԱՅԻՆ/ՏԵՂԱԿԱՆ/ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՎՁՄ ՇՀ ԱՇՁԲ-16/03-1

ք. Եղեգնաձոր <<15 >> հունվար 2016 թ.

<<ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմ>>պետական կառավարչական հիմնարկը , ի դեմս աշխատակազմի ղեկավար Կ. Սահակյանի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և,, Եղեգնաձորի ՃՇՇ,, ՓԲԸ_ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Մաթևոսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման,ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և կատարման ժամկետ է սահմանվում մինչև՝ 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 2 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի 2016 թվականին կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 36048410.(երեսուն վեց միլիոն քառասունութ հազար չորս հարյուր տաս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

Պայմանագրով 2017 թվականի և հաջորդ տարիների համար նախատեսված աշխատանքները կկատարվեն դրանց համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր (այսուհետև՝ Համաձայնագիր), իսկ նշված Համաձայնագրով կսահմանվի կատարման ենթակա Աշխատանքների գինը:

Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի[1]:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան կողմերի միջև լրացուցիչ համաձայնագրի կնքման տարվա դեկտեմբերի 25-ը:

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:*

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման և պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը կլուծարվի, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվի:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

---

[2] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.9 Սույն պայմանագիրը կազմված է **15** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.10 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան	**''Եղեգնաձորի ՃՇՇ'' ՓԲԸ ՀՀ**
ք.Եղեգնաձոր, Շահումյան 5	**Վայոցձորի մարզ**
ՀՀՖինանսների նախարարության	**ք.Եղեգնաձոր, Մխչյանի 2**
գործառնական վարչություն	**„Հայբիզնեսբանկ ՓԲԸ Բերան**
ՀՀ 900351084026	**ՀՀ 1150000173720100**
ՀՎՀՀ08907717	**ՀՎՀՀ02608900039**
Կ.Սահակյան	Ա.Մելքումյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված 1
<<15 >> հունվար 2016 թ. *կնքված N ՎՀՄՇՀ ԱՇՁԲ-16/03-1*
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ Վայոց ձորի մարզի մարզային /տեղական/ նշանակության ճմեռային պահպանման,ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքների

I. Տեխնիկական պահանջներ

1. Ապահովել ՀՀ Վայոց ձորի մարզի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների և արհեստական կառույցների պահպանվածությունը այնպիսի վիճակում, որը համապատասխանում է տարվա ցանկացած ժամանակ անվտանգ երթևեկության ապահովման պահանջներին:

2. Ապահովել սպասարկվող ճանապարհահատվածներին տրանսպորտի շուրջօրյա և անվտանգ երթևեկությունը համաձայն ճանապարհների պահպանման կանոնների:

3. Ընթացիկ ձմեռային (ձմեռվա ժամանակահատված) պահպանման պահանջներն են՝

- Ճանապարհների կոնստրուկտիվ տարրերի և երթևեկամասերում թույլ չտալ աղբի, ձյան և սառույցի առկայություն
- Ձյան առատ տեղումների ընթացքում թույլ չտալ 5 սմ-ից ավել շերտի գոյացում: Ուժեղ ձնաբքերի դադարելուց անմիջապես հետո սկսել և ոչ ավելի քան 4 ժամվա ընթացքում ավարտել ճանապարհների մաքրումը
- Մերկասառույցի դեմ պայքարի համար ժամանակին կիրառել աղի և ավազի ցանումը
- Աշխատանքների կատարման ընթացքում ապահովել երթևեկության անվտանգությունը
- Առատ ձյան տեղումների և ուժեղ ձնաբքերի ժամանակ, ճանապարհների մաքրման տեխնիկապես անհնարինության կամ աննպատակահարմարության դեպքում, ճանապարհների փակումն ու բացումը կատարել Պատվիրատուի և ավտոտեսչության տեղական մարմինների համաձայնությամբ
- Ստեղծել շուրջօրյա հերթապահություն, վարել տվյալների գրանցման մատյան և ամեն օր, ժամը 6-8-ը, 12-14-ը և 18-20-ը Պատվիրատուի հերթապահությանը տվյալներ հայտնել, տեղում եղանակի ու ճանապարհների վիճակի մասին:
- Սպասարկվող ավտոճանապարհների տարածքում ունենալ առնվազն մեկ ստացիոնար հենակետ՝ ապահոված հոսանքով, կապի միջոցներով բանվորների և մեխանիզատորների համար ջեռուցվող հանգստյան սենյակով:
- Ապահովել պահպանման մակարդակի բնորոշ ցուցանիշները ՀՀ կառավարության 04.11.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ, ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների ընդունման կարգի» մեթոդական ցուցումների 3-րդ աղյուսակի «Ճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման ցուցանիշների առաջադրվող պահանջների» համաձայն:

4. Ընթացիկ ամառային («ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ» ժամանակահատված) պահպանման և շահագործման պահանջներն են՝

- Ճանապարհների շահագործման և պահպանման կանոնների համաձայն ապահովել սպասարկվող ավտոճանապարհների հետևյալ կոնստրուկտիվ տարրերի պահպանվածությունը՝
  - Հողային պաստառ և օտարման շերտ
  - Երթևեկելի մաս
- Ապահովել պահպանման մակարդակի բնորոշ ցուցանիշները ՀՀ կառավարության 04.11.2010թ.-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ, ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների կարգի» մեթոդական ցուցումների 3-րդ աղյուսակի

«Ճանապարհների ընթացիկ ամառային պահպանման ցուցանիշների առաջադրվող պահանջների» համաձայն:

5. ՀՀ Վայոց ձորի մարզի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների վիճակը և սպասարկման մակարդակները 2016թ. համար՝ համաձայն N 1.1 հավելվածի:

II. Ձեռքբերման պայմաններ

1. ,,ՀՀ Վայոց ձորի մարզի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում,ընթացիկ պահպանում և շահագործում,, աշխատանքների կատարման ժամկետը սահմանվում է **5** տարի՝ **01.01.2016թ.-31.12.2020թ.:**

III. Աշխատանքների ինքնարժեքի հաշվարկի և գնային առաջարկի ձևեր

1. ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և կատարված աշխատանքների ընդունման» կարգի IV գլխի 33-րդ կետի համաձայն.

ա) ձև 8-ում (համաձայն՝ N 1.2 հավելվածի) բերված յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար մասնակցի կողմից լրացվում են սպասարկման ենթակա ճանապարհահատվածների ամբողջ ցանցի «ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ» և «ՁՄԵՌ» ժամանակաշրջանների պահպանման աշխատանքների համար կատարվող ծախսերը և հաշվարկվում են սպասարկվող ճանապարհահատվածների պահպանության արժեքները, որն օգտագործվում է միայն ընթացակարգում առաջին տեղ զբաղեցրած մասնակցին որոշելու նպատակով.

բ) ձև 8-ի բոլոր հանրագումարները լրացվում են Ձև 6-ի Աղյուսակ 5-ի համապատասխան սյունակներում՝ ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի արժեքի (համաձայն՝ N 1.2 հավելվածի).

գ) ընթացիկ («ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ» պահպանման ժամանակաշրջան) պահպանման և շահագործման աշխատանքների 1 կմ-ի արժեքները լրացվում են Ձև 6-ի աղյուսակներ 6-ում և 7-ում՝ ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի արժեքի (համաձայն՝ N 1.2 հավելվածի)՝

- Աղյուսակներում լրացվող 1 կմ ավտոճանապարհի պահպանման արժեքում նշագծման աշխատանքների գինը չի հաշվարկվում.

- Աղյուսակների բոլոր ազատ վանդակները պետք է պարտադիր լրացվեն մասնակցի կողմից՝ անկախ տվյալ տարածաշրջանում ընդգրկված ճանապարհների նշանակությունից, վիճակից և սպասարկման մակարդակից.

դ) արժեքները պետք է ընդգրկեն ՀՀ օրենսդրությամբ պահանջվող բոլոր հարկատեսակներն ու տուրքերը, այդ թվում՝ ԱԱՀ:

IV. Աշխատանքների սահմանային արժեքներ և գնային առաջարկի գնահատում

1. Գնային առաջարկի գնահատումը կատարվում է ընթացակարգի մասնակիցների կողմից լրացված և ներկայացված՝

- Ձև 6-ի արժեքների համեմատությամբ պահպանման և շահագործման աշխատանքների սահմանային արժեքների հետ,

- Ձև 7-ի հանրագումարների համեմատությամբ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր, Շահումյան 5
ՀՀՖինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900351084026
ՀՎՀՀ08907717

Գ.Սահակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
"Եղեգնաձորի ՃՇՇ" ՓԲԸ ՀՀ
Վայոցձորի մարզ
ք.Եղեգնաձոր Գայի փող.2
,,Հայբիզնեսգրուպ,, ՓԲԸ Բրիտան
ՀՀ 1300013322010
ՀՎՀՀ08900039

Ս.Պետրոսյան
(ստորագրություն)

Հավելված N 1.1
<<15>> հունվար 2016թ. կնքված N ՎՁՄՇՀ ԱՇՁԲ-16/03-1
ծածկագրով գնման պայմանագրի

Չափաբաժին 1
ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների վիճակը, սպասարկման մակարդակները և սահմանային արժեքները 2016 թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը

Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Ավտոճանապարհի Տեխնիկական կարգը	Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/	Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը	Սպասարկման պահանջվող մակարդակ	Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/	Միավորի գինը /հազար դրամ/	Ընդամենը /հազար դրամ/
1	2	3	4	5	6	7	8
Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ							
Մ2 - Աղավնաձոր կմ0.00 – կմ6.5	Տեղական II-IV	6.5		Միջին	6.5	311502	2024763
Մ10 – Շատին - Գոխթանիկ կմ0.0 – կմ19.0	Տեղական II-IV	20		Միջին	19	311502	5918538
Մ2 – Չիվա - Ռինդ կմ0.0 - կմ5.3	Տեղական II-IV	5.3		Միջին	5.3	311502	1650960.6
Տ-9-21 - Հորբատեղ կմ3.0 – կմ6.0	Տեղական II-IV	6.5		Միջին	3.0	311502	934506
Տ-9-21 - Գետիկվանք կմ0.0 – կմ7.0	Տեղական II-IV	13.0		Միջին	7.0	311502	2180514
Մ10 - Հորս կմ0.0 – կմ5.5	Տեղական II-IV	5.5		Միջին	5.5	311502	1713261
Մ10 - Սալլի կմ0.0 – կմ1.5	Տեղական II-IV	1.5		Միջին	1.5	311502	467253
Մ10 - Թառաթումբ կմ0.0 - կմ1.5	Տեղական II-IV	1.5		Միջին	1.5	311502	467253
Մ2 - Մոզրով կմ0.0 – կմ11.6	Տեղական II-IV	12.7		Միջին	11.6	311502	3613423.2

S-9-24 –Սևաժայռ կմ0.0 – կմ1.8	Տեղական II-IV	1.8		Միջին	1.8	311502	560703.6
Մ2 -Ելփին կմ0.0 - կմ1.5	Տեղական II-IV	1.5		Միջին	1.5	311502	467253
Ընդամենը		**75.8**			**64.2**	311502	**19998428.4**
Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ							
Մ2 - Աղավնաձոր կմ0.00 – կմ6.0	Տեղական II-IV	6.5	SL(I)	Միջին	6.0	715877.88	4295267.2
Մ2 – Չիվա - Ռինդ կմ0.0 – կմ3.5	Տեղական II-IV	5.3	SL(I)	Միջին	3.5	715877.88	2505572.4
Մ10 - Հորս կմ0.0 – կմ4.5	Տեղական II-IV	5.5	SL(I)	Միջին	4.5	715877.88	3221450.4
Մ10 – Շատին - Գողթանիկ կմ0.0 – կմ8.42	Տեղական II-IV	20.0	SL(I)	Միջին	8.42	715877.88	6027691.6
Ընդամենը		**37.3**			**22.42**	715877.88	**16049981.6**
Ընդամենը եղեգնաձորի տարածաշրջանով							

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր, Շահումյան 5
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900351084026
ՀՎՀՀ08907417

Գ.Սահակյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
"Եղեգնաձորի ՃՇՇ" ՓԲԸ ՀՀ
Վայոցձորի մարզ
ք.Եղեգնաձոր, Ալավերդյան 2
"Հայերգեոստրոյ" ՓԲԸ Ք.Երևան
ՀՀ 1150001732210100
ՀՎՀՀ08900039

Ս.Ղևոնդյան
(ստորագրություն)

Հավելված N 1.2

<<15 >> հունվար 2016 թ . *կնքված*

N ՎՁՄՇՀ ԱՇՁԲ-16/03-1 ծածկագրով գնման պայմանագրի

Ձև N 6.Աղյուսակ 6.1

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանի II-IV տեխնիկական կարգի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային (ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ) պահպանման արժեքը (ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
Երաշխիքային ՏԵ	363276	X	X
Լավ ՏԼ (I)	626393.3	596564.9	X
Բավարար ՏԲ (II)	X	1170000	1020000

ՀՀ Վայոց ձորի մարզի ---------- տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման արժեքը (ՀՀ դրամ)

Ավտոճանապարհի վիճակը (Ծածկագիր)	Տարվա կտրվածքով (ներառյալ շահույթը, սակայն առանց ԱԱՀ-ի)		
	Լավ պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Միջին պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը	Բավարար պահպանման մակարդակի դեպքում՝ 1կմ-ի պահպանման արժեքը
II-IV տեխնիկական կարգի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհներ	275000	259585	242000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր, Շահումյան 5
ՀՀՖինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՎՀՀ 900351084026
ՀԿՀ 08907717
Գ.Մահակյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ՝

Եղեգնաձորի ՃՇՇ'' ՓԲԸ ՀՀ
Վայոցձորի մարզ
ք.Եղեգնաձոր.Ալավերդյան 2
,,Հայբիզնեսբանկ'' ՓԲԸ ք.Երևան
ՀՀ 1150001073720400
ՀՎՀՀ 08900039
Ա.Գրիգորյան
(ստորագրություն)

Հավելված 2
<<15 >> հունվար 2016 թ . *կնքված*
N ՎՁՄՇՀ ԱՇՁԲ-16/03-1 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդ ամենը Տարի
1.	ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանի մարզային /տեղական/նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում,,	9000000	9000000	17000000	24600000	24600000	24600000	31000000	31000000	31000000	36048410	36048410	36048410	36048410

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր, Շահումյան 5
ՀՀֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900351084026
ՀՎՀՀ08907717

Կ.Սահակյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

''Եղեգնաձորի ՃՇՇ'' ՓԲԸ ՀՀ
Վայոցձորի մարզ
ք.Եղեգնաձոր.Ալավերդյան 2
,,Հայբիզնեսբանկ,, ՓԲԸ Ք.Երևան
ՀՀ 1150000173720100
ՎՀՀ08900039

Ն.Թալալյան
(ստորագրություն)

Հավելված 3
<<15 >> հունվար 2016 թ.
կնքված N ՎՁՄՇՀ ԱՇՁԲ-16/03-1 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
<<15 >> հունվար 2016 թ. *կնքված*
կնքված N ՎՀՄՇՀ ԱՇՁԲ-16/03-1 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 1
<<15>> հունվար 2016թ. կնքված N ՎՁՄՇՀ ԱՇՁԲ-16/03-1-1
համաձայնագրի

Չափաբաժին 1
ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների վիճակը, սպասարկման մակարդակները և սահմանային արժեքները 2016 թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը

Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը	Ավտոճանապարհի Տեխնիկական կարգը	Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/	Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը	Սպասարկման պահանջվող մակարդակ	Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/	Միավորի գինը /հազար դրամ/	Ընդամենը /հազար դրամ/
1	2	3	4	5	6	7	8
Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ							
Մ2 - Աղավնաձոր կմ0.00 – կմ6.5	Տեղական II-IV	6.5		Միջին	6.5	311502	2024763
Մ10 – Շատին - Գոխթանիկ կմ0.0 – կմ19.0	Տեղական II-IV	20		Միջին	19	311502	5918538
Մ2 – Չիվա - Ռինդ կմ0.0 - կմ5.3	Տեղական II-IV	5.3		Միջին	5.3	311502	1650960.6
Տ-9-21 - Հորբատեղ կմ3.0 – կմ6.0	Տեղական II-IV	6.5		Միջին	3.0	311502	934506
Տ-9-21 - Գետիկվանք կմ0.0 – կմ7.0	Տեղական II-IV	13.0		Միջին	7.0	311502	2180514
Մ10 - Հորս կմ0.0 – կմ5.5	Տեղական II-IV	5.5		Միջին	5.5	311502	1713261
Մ10 - Սալլի կմ0.0 – կմ1.5	Տեղական II-IV	1.5		Միջին	1.5	311502	467253
Մ10 - Թառաթումբ կմ0.0 - կմ1.5	Տեղական II-IV	1.5		Միջին	1.5	311502	467253
Մ2 - Մոզրով կմ0.0 – կմ11.6	Տեղական II-IV	12.7		Միջին	11.6	311502	3613423.2

S-9-24 –Սևաժայռ կմ0.0 – կմ1.8	Տեղական II-IV	1.8		Միջին	1.8	311502	560703.6
Մ2 -Ելփին կմ0.0 - կմ1.5	Տեղական II-IV	1.5		Միջին	1.5	311502	467253
Ընդամենը		**75.8**			**64.2**	311502	**19998428.4**
Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ							
Մ2 - Աղավնաձոր կմ0.00 – կմ6.0	Տեղական II-IV	6.5	SL(I)	Միջին	6.0	715877.88	4295267.2
Մ2 – Չիվա - Ռինդ կմ0.0 – կմ3.5	Տեղական II-IV	5.3	SL(I)	Միջին	3.5	715877.88	2505572.4
Մ10 - Հորս կմ0.0 – կմ4.5	Տեղական II-IV	5.5	SL(I)	Միջին	4.5	715877.88	3221450.4
Մ10 – Շատին - Գողթանիկ կմ0.0 – կմ8.42	Տեղական II-IV	20.0	SL(I)	Միջին	8.42	715877.88	6027691.6
Ընդամենը		**37.3**			**22.42**	715877.88	**16049981.6**
Ընդամենը եղեգնաձորի տարածաշրջանով							

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր, Շահումյան 5
ՀՀՖինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900351084026
ՀՎՀՀ08907717

Ա.Սահակյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
''Եղեգնաձորի ՃՇՇ'' ՓԲԸ ՀՀ
Վայոցձորի մարզ
ք.Եղեգնաձոր.Ալավերդյան 2
,,Հայբիզնեսբանկ ՓԲԸ Երևան
ՀՀ 1150000173720100
ՀՎՀՀ08900039

Ս.Թադևոսյան

Հավելված 2
«15» 01 2016թ. կնքված
ՎՁՄԵՇԱԾՁԲ-16/03-1-1 համաձայնագրի

Գնման ժամանակացույց
(ՀՀ Վայոց ձորի մարզպետարան)

/հազար դրամ/

N N	Ձեռք բերվող աշխատանքի անվանումը	Գնումը 2016թ. ընթացքում				Ընդամենը
		I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
1	2	3	4	5	6	7
1	ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանում	18500.0	6420.0	6420.0	4708.4	36048.4

Պատվիրատու

ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք Եղեգնաձոր, Շահումյան 5
Եղեգնաձորի ՏԳԲ
ՀՀ 900351084026
ՀՎՀՀ08907717

Կ. Ստեփանյան
(ստորագրություն)

Կապալառու

Եղեգնաձորի <<ՃՇՇ>>ՓԲԸ ՀՀ Վայոց ձորի
մարզ ք. Եղեգնաձոր, Ալավերդյան 2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ ք. Երևան
Հ/Հ1150000173720100
ՀՎՀՀ08900039

Ս. Հովհաննիսյան
(ստորագրություն)

Հավելված 3

«15» 01 2016թ. կնքված
ՎՀՄՇՀԱԾՁԲ-16/03-1-1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
(ՀՀ Վայոց ձորի մարզպետարան)

/հազար դրամ/

Աշխատանքի անվանումը	Աշխատանքի պայմանագրային գինը	Ֆինանսավորման գումարը ՀՀ պետական բյուջեից՝ 2016թ. ընթացքում ըստ ամիսների /աճողական/												Ընդամենը
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների 2016թ. ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանում:	36048.4	9000.0	9000.0	17000.0	24600.0	24600.0	24600.0	31000.0	24600.0	24600.0	36048.4	36048.4	36048.4	36048.4

Վճարման ենթակա գումարները պատկերված են աճողական կարգով

Պատվիրատու

ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք Եղեգնաձոր, Շահումյան 5
Եղեգնաձորի ՏԳԲ
ՀՀ 900351084026
ՀՎՀՀ 08907717

_____ Կ. Ստեփանյան
(ստորագրություն)

Կապալառու

Եղեգնաձորի <<ՃՇՇ>>ՓԲԸ
ք. Եղեգնաձոր Ալավերդյան 2
«Ամերիզնեսբանկ» ՓԲԸ ք. Երևան
ՀՎՀՀ 08900039

_____ Ա.Մաթևոսյան
(ստորագրություն)